

ԴԱՍ 22. ԳԼՈՒԽ 20 - ՅԱԶԱՐԱՄՅԱՆ

Վերջին հավածի միատեսությունը

Գլուխ 17. Խորհուրդ Բաբելոն

Գլուխ 18. Խորհուրդ Բաբելոն

Գլուխ 19. Թագավորի վերադարձը


Գլուխ 20. Յազարամյան

Գլուխ 21. Հավիտենություն

Գլուխ 22. Ամփոփում

Հզարամյա. լատիներեն mille (1000) և annum (տարի) (միլենիում-հազարամյա): Նաև հունարեն chiasm, ինչպես վաղ եկեղեցին էր խոսում դրա մասին:

Վախճանաբանություն



«Ահա կհղիանաս և որդի կծնես ու Նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի և Բարձրյալի Որդի կկոչվի, և Տեր Աստված Նրան կտա Իր Հոր՝ Դավթի աթոռը. և Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, և Նր աթագավորությանը վերջ չի լինի» (Ղուկ. 1:31-33):

Մենք լուրջ ենք ընդունում այս խոստումը: Այդ ժամանակ Դավթի գահը գոյություն չունի: Եվ մինչև հիմա էլ գոյություն չունի: Այս խոստումը դեռ չի կատարվել: Այն ապագայում կկատարվի: Ինչ է այն իրականում նշանակում:

Չարսը

Եկեղեցին նկարագրվում է որպես մի կույս, ով սպասում է իր փեսացուի գալուն (Բ Կորն. 11:2, նաև Եփ. 5:22-23): Եկեղեցին «նշանված» է Նրա հետ, թեև մենք Նրան չենք տեսել (Ա Պետ. 1:8): Մի օր Նա կվերադառնա՝ Իր հարսնացուին երկինք տանելու (Հովհ. 14:1-6, Ա Թեսաղ. 4:13-18):

Ամուսնությունը կատարված

- Ուխտը հաստատված. Ա Կորն. 11:25
- Առնելու գինը. Ա Կորն. 6:19-20
- Հարսնացուն առանձնացված. Եփ. 5:25-27, Ա Կորն. 1:2, 6:11, Եբր. 10:10, 13:12
- Փեսացուն հեռանում է Հոր տուն...
- Ուխտի հիշեցում. Ա Կորն. 11:25-26
- Նրան ուղեկցողները, երբ Նա վերադառնա՝ հավաքելու Իր Հարսին. Ա Թեսաղ. 4:16-17
- Փեսացուն. Մաթ. 9:15, 22:1-13, Բ Կորն. 11:2, Եփ. 5:23-32
- Խնջույքը. Ես. 25:6-10, 26:1-4,19, հմմտ. Ղուկ. 22:15,16, Մաթ. 26:39
- Հարսնացուն հատուկ փոխհարաբերություն է վայելում. հմմտ. Հովհ. 17:23-26

Մարգարեական համարներ

- 8,362 կանխատղ համարներ (predictive verses)
- 1,817 կանխասածություններ (predictions)

J. Barton Payne, Encyclopedia of Biblical Prophecy

Մեսիական Իշխանը

1,845 հղումներ Հին Կտակարանում

17 գրքեր մեծ նշանակություն են տալիս այդ դեպքին

318 հղումներ Նոր Կտակարանում

216 գլուխներ

27 գրքերից 23-ը մեծ նշանակություն են տալիս այդ դեպքին

Ոչ-հազարամյակային տեսության պատմությունը

- Օրեզինես. Գրքի փոխաբերականությունը (councils held in Alexandria in 231 and 232 A.D)
- Ավգուստին. Ոչ-հազարամյակային (Ի՞նչու)
- Հռոմեական կաթոլիկ վախճանաբանություն
- Բարեփոխումը (Ռեֆորմացիան) չկարողացավ ճիշտ հասցեագրել... Բողոքական հարանվանություններից շատերն իրենց վախճանաբանական հայացքների մեջ հետևում են Ոչ-հազարամյակային և Նեղություններից հետո տեսություններին:

Ոչ-հազարամյակայինի հետ կապված խնդիրներ

- Մեսիական խոստումներ ողջ Հին Կտակարանով մեկ
- Իսրայելի վերջնական նպատակն Աստծո Ուխտի մեջ
- Գաբրիել հրեշտակի միջոցով Մարիամին տրված խոստումը
- Բազմաթիվ վերահաստատումներ Նոր Կտակարանում

Անտիսեմիտիզմի աղբյուրը. Ավգուստինից մինչև Օսվենցիմ... և դա նորից տեղի կունենա:

Իսրայելը և եկեղեցին

- Տարբերությունները. տարբեր ծագումներ, առաքելություններ և վերջնական նպատակներ
- «Փոխատեղման» տեսությունը հերքում է Իսրայելի տեղն Աստծո ծրագրում և Աստծուն ստախոս է դարձնում: Այս տեսությունը հիմք դարձավ քրիստոնեական հակասեմիտիզմի համար:
- «70 շաբաթները» հատկապես վերաբերում են Իսրայելին
- Պողոսի բաժանումը. հրեաներ + հեթանոսներ + եկեղեցի
- Տարբերությունը նորից է երևում Հայտնություն 4-րդ գլխից հետո

Չազարամյան

- Դավթին տրված խոստումները (Բ Թագ. 7:12-17, 23:5) երդման ներքո (Սաղմ. 89:34-37)
- Կանխասված սաղմոսներում (Սաղմոսներ 2, 110)
- Կանխասված մարգարեություններում (Ես. 2:1-5, 4:1-6, 11:1-9, 12:1-6, 30:18-26, 35:1-10, 60գլ., 61:3-62, 66գլ., Եր. 23:3-8, 32:37-44, Եզեկ. 40-48, Դան. 2:44- 45, 7:13-14, 12:2-3, Միք. 4:1-8, Զաք. 12:10-14:21

«Եվ երբ քո օրերը լրանան, ու դու ննջես քո հայրերի հետ, քեզանից հետո քո երանքից էլած գավակիդ եմ բարձրացնելու ու հաստատելու եմ նրա թագավորությունը: Նա է Իմ անվան համար տուն շինելու, **ու նրա թագավորության աթոռը կանգուն պիտի պահեմ հավիտյան:** Ես նրան հայր եմ լինելու, ու նա Ինձ՝ որդի: Եթե նա անիրավություն գործի, Ես նրան մարդկանց գավազանով ու մարդկանց որդիների հարվածներով եմ խրատելու: Բայց Իմ ողորմությունը նրանից չեմ հեռացնելու, ինչպես որ հեռացրի Սավուդից ու նրան քո առջևից քշեցի: Եվ քո տունն ու թագավորությունը քո առջև հավիտյան հաստատվելու են, **քո աթոռը** հավիտյան հաստատ է մնալու» (Բ Թագ. 7:12-16):

«Իմ ուխտը չեմ անարգելու ու շուրթերիցս էլածը չեմ փոխելու: Մի անգամ երդվեցի Իմ սրբությամբ և Դավթին սուտ չեմ ասի. Նրա սերունդը հավիտյան է մնալու, ու նրա գահը՝ ինչպես արևն Իմ առջև, հավիտյան հաստատված է լինելու լուսնի պես, և երկնքում՝ հավատարիմ վկայի պես» (Սաղմ. 89:34-37):

Հագարամյան

- Խոստացված Մարիամին (Ղուկ. 1:32, Միք. 5:2, Ես. 9:6,7, Դան. 2:44) և հաստատված առաքյալներին (Ղուկ. 22:29-30)
- Տերունական աղոթքը. «Քա թագավորությունը գա» (Մաթ. 6:10,13, Գործք. 1:6, Մաղմուններ 45, 46, 47, 48)
- Իշխանությունը (Մաղմուններ 2, 110), «երկաթե գավազան» (Հայտ. 12:5, 19:15), «Ամեն մի ծունկ պիտի խոնարհվի» (Փիլիպ. 2:6-11)

Հայտնություն 20-րդ գլուխ

1) Եւ տեսա մի հրեշտակ վայր գալիս երկնքից, որ դժոխքի բանալին ուներ, եւ մի մեծ **շղթա** իր ձեռքում:

Սա 19-րդ գլխի շարունակությունն է: Գլուխների բաժանումը «ներշնչված» չէ, այդ բաժանումներն արվել են Քենտերբուրյան եպիսկոպոս Ստեփան Լենգտոնի կողմից 13-րդ դարի սկզբում:

2) Եւ նա բռնեց այն վիշապին այն առաջի օձին որ է Բանասարկուն եւ սատանան, եւ կապեց նորան **հազար տարի**: 3) Եւ գցեց նորան **անդունդի** մեջ, եւ փակեց եւ կնիք դրավ նորա վրա որ էլ չ'մոլորեցնի ազգերին մինչեւ որ **հազար տարին** լրանա. եւ նորանից հետո պետք է որ նա մի քիչ ժամանակ արձակուի:

«**Անդունդ**». 7 անգամ Հայտնության մեջ. 9:1 2,11, 11:7, 17:8, 20:1,3:

Որոշները հավատում են, որ Հագարամյան արդեն սկսվել է: Եթե այդպես է, ուրեմն սատանայի շղթաները չափազանց երկար են... Պողոսը հստակ ասում է, որ սատանան դեռևս ազատ է (Եփ. 6:10, Հովհաննեսը համաձայն է նրա հետ. Հայտ. 2:13, 3:9):

Նա երկնքից դուրս է շարտվում Հայտ. 12:9-ում. Հիմա նա շարտված է երկրի վրա: (Մաղմ. 90:4 և Բ Պետ. 3:8-ն օգտագործվում են արդարացնելու «ալեգորիաների» տեսությունը. 1000 տարին = 1 օր):

«... **հազար տարի**». այս ժամանակահատվածը վեց անգամ հատուկ նշված է այս գլխում: Քանի՞ անգամ պետք է Աստված ասի, որպեսզի դա ճիշտ լինի:

4) Եւ տեսա աթոռներ, եւ նորանց վրա նստեցին. եւ դատավորություն տրվեցավ նորանց, եւ նորանց հոգիները որ գլխատվել էին Հիսուսի վկայության համար եւ Աստուծո խօսքի համար, եւ նորանց որ չ'երկրպագեցին գազանին եւ ոչ էլ նորա պատկերին, եւ նորա դրոշմը չ'առան իրենց ճակատի եւ ոչ էլ իրանց [աջ] ձեռքի վրա, եւ սորանք կենդանացան եւ Քրիստոսի հետ թագավորություն արին **հազար տարի**.

Կա երկու հարություն. Դան. 12:2, Հովհ. 5:28-29, Գործք. 24:15, Ղուկ. 14:14 («հանկարծ»):
 Առաջին հարությունը դասակարգ է, ոչ թե միանգամյա դեպք (not a single event):

Հազար տարի

Առաջին հարությունը

Երկրորդ հարությունը

- Դան. 12:2 - 2 Եւ երկրի հողում գնացողների շատերը պիտի զարթնեն ոմանք ի հավիտենական կեանք, իսկ ոմանք ի հավիտենական նախատինք եւ անարգանք:
- Հով. 5:28-29 - 28 Սորա վերա մի զարմացեք. որովհետեւ ժամանակ կգա, որ ամենքը՝ որ գերեզմաններում են, նորա ձայնը կլսեն: 29 Եւ դուրս կգան նորանք որ բարի են գործել՝ դէպի կեանքի հարությունը, եւ նորանք որ չար են արել՝ դէպի դատաստանի հարությունը:
- Գործ. 24:15 - 15 Հուսալով այն Աստուծուն որին դորանք էլ սպասում են, թէ արդարների եւ մեղավորների հարություն պիտի լինի:
- Ղուկ. 14:14 - 14 Եւ երանելի կլինիս. որովհետեւ բան չ'ունեն որ փոխարէն վճարեն քեզ. որովհետեւ արդարների հարության ժամանակ կ'լինի քեզ հատուցումը:

1. **Ֆիզիկական մահ.** հոգու և մարմնի բաժանումը

2. **Հոգևոր մահ.** հոգու բաժանումն Աստծուց

Anastasei. «**ոտքի կանգնել**». մարմնով հարություն: Գահերը բառացի են, նահատակները բառացի են, Հիսուսը բառացի է, հարությունը բառացի է, հազար տարին բառացի է:

Չորս դասեր

1. **Եկեղեցի. Հայտ. 5:10, 2:26-28, 3:12,21, Ա Թեսաղ. 4:13- 18, Բ Տիմ. 2:12**

Հայ. 2:26 - 26 Եւ ով որ հաղթում է եւ իմ գործերը պահում մինչեւ վերջ, նորան իշխանություն կ'տամ ազգերի վրա.

1 Թես. 4:13-17 - 13 Որովհետեւ եթէ հաւատում ենք, որ Յիսուսը մեռաւ եւ յարութիւն առաւ, այնպէս էլ Աստուած ննջեցեալներին Յիսուսի ձեռով կ'բերէ նորա հետ: 14 Որովհետեւ սա ենք ասում ձեզ Տիրոջ խօսքովը, թէ մենք որ կենդանի մսացած ենք մինչեւ Տիրոջ գալը, ննջեցեալներիցը չենք առաջանալ: 15 Որովհետեւ ինքը Տէրը հրամանով, հրեշտակապետի ձայնով եւ Աստուծոյ փողով վայր կ'գայ երկնքից. եւ Քրիստոսով մեռելներն առաջ յարութիւն կ'առնեն, 16 Եւ յետոյ մենք, որ կենդանի ենք մսացած նորանց հետ մէկտեղ ամպերով օդի մէջ կ'յափշտակուինք Տիրոջը դիմաւորելու եւ այնպէս ամեն ժամանակ Տիրոջ հետ կ'լինինք: 17 Ուրեմս իրար մխիթարեցէք այս խօսքերովը:

2. Հին Կտակարանի սուրբեր. Դան. 12:1-4, Ես. 25:8-9

Ես. 25:8-9 - 8 Նա պիտի կլանէ մահին հավիտյան, եւ Եհովա Տէրը պիտի ջնջէ արտասուքը ամեն երեսից, եւ իր **ազգի** ամօթը պիտի հեռացնէ բոլոր երկրի վրայից, որովհետեւ Տէրն է ասում: 9 Եւ այն օրն ասելու են, ահա մեր Աստուածը, որին մենք հուսացել ենք, եւ նա մեզ փրկեց. Եհովան է սա, որին հուսացել ենք, ուրախանալու եւ ցնծալու ենք նորա փրկությունով:

2 Տիմ. 2:12 - 12 Եթէ համբերենք, հետն էլ կ'թագավորենք, եւ եթէ ուրանանք, նա էլ կ'ուրանա մեզ:

3. Մեծ նեղությունների նահատակներ. Հայտ. 6:9

Հայ. 6:9 - 9 Եւ երբոր հինգերորդ կնիքը բացավ, տեսա սեղանի ներքեւ նորանց հոգիները որ մորթուած էին Աստուծո խօսքի համար եւ այն վկայութեան համար որ ունէին.

4. Մեծ Նեղության սրբեր, կենդանի, որ «չերկրապագեցին գազանին»

Հայ. 12:6,14 - 6 Եւ կինը փախավ անապատ, ուր Աստուածանից պատրաստուած տեղ ունէր, որ այնտեղ կերակրեն նորան հազար երկու հարյուր եւ վաթսուն օր: 14 Եւ այն կնկան երկու մեծ արծվի թեւ տրուեցավ, որ թռչի անապատ՝ իր տեղը. ուր որ կերակրվում է մի ժամանակ, եւ ժամանակներ եւ կէս ժամանակ օձի երեսիցը:

5) Իսկ մեռելների մասցեալները չ'կենդանացան, մինչեւ որ **հազար տարին լրանա**: Սա առաջի հարությունն է: 6) Երանելի եւ սուրբ է, որ բաժին ունի առաջի հարության մեջ. սորանց վերա իշխանություն չ'ունի երկրորդ մահը. այլ Աստուծո եւ Քրիստոսի քահանաներ կ'լինեն. եւ նորա հետ կ'թագավորեն հազար տարի:

Հայտնության յոթ երանիներին 6-րդը: (Վերջինը. 22:7), հմմտ. Հայտ. 2:11, 20:6,14, 21:8: Թագավորներ և քահանաներ. թագավորելու են Նրա հետ. անհավատալի՜ է: (Հմմտ. 24 երեցները...):

Հազարամյա

Արարչագործությունը փոխվում է.

- Ֆիզիկական փոփոխություններ. Ես. 35:1-10

9 Այնտեղ առյուծ չի լինի եւ գիշատիչ գազան չի գա նորա վրա, եւ այնտեղ չի գտնվի. եւ փրկուածները ման կգան: 10 Եւ Տիրոջ փրկուածները ետ պիտի դառնան, եւ գան Սիօն բարձրաձայն երգերով, եւ նորանց գլխին՝ հավիտենական ուրախություն. ուրախության ու ցնծության են հասնելու նորանք. եւ տրտմությունն ու հեծությունը փախչելու է:

- Անեծքը վերցվում է. Ես. 11:6-9

6 Եւ գայլը կբնակուէ գառի հետ, եւ ընձառյուծը ուլի հետ կպառկէ. եւ հորթը, առյուծը եւ պարարտ գուարակը մեկտեղ կլինեն, եւ մի փոքր երեխա կբշէ նորանց: 7 Եւ կոճու ու արջը կարածեն, մեկտեղ կպառկեն նորանց ձագերը, եւ առյուծը արջառի պէս հարդ կուտէ: 8 Եւ կաթնակեր տղան իժի ձակի վրա կխաղա, եւ կաթից կտրուածը ձեռքը իժերի բույնի վրա կդնէ:

- Արարչագործությունը ազատագրվում է. Ծննդ. 3 հմմտ. Հռոմ. 8:20-22
20 Նորա համար որ ստեղծուածները հնազանդեցին ունայնության, ոչ թէ կամքով այլ նորա համար՝ որ հնազանդեցրեց այն հույսով, 21 Որ՝ ստեղծուածներն իրանք էլ ապականության ծառայութիւնից կ'ազատվեն՝ Աստուծո որդկանց փառավոր ազատության մէջ մտնելով: 22 Որովհետեւ գիտենք որ բոլոր ստեղծուածները մինչեւ հիմա միասին հառաչում են եւ ցավի մէջ են:
- Երկիրը լցված է Տիրոջ գիտությամբ. Ես. 11:9, Ամբ. 2:14
որովհետեւ երկիրը լիքն է լինելու Տիրոջ գիտությունով, ինչպէս որ ջուրերը ծածկում են ծովը:

Դեռ, ոչ հավիտենությունը. Ես. 65

- Մահ, մեղք. Ես. 65:20
Այնտեղ չի լինելու մանկահասակ եւ կամ ծեր, որ լցրած չլինի իր կեանքի ժամանակը, քանզի կրտսեր (todler) որդին հարյուր տարեկան պիտի լինի, իսկ հարյուր տարեկանում մեռնողը մեղավոր եւ անիծյալ պիտի համարուի:
- Յուրաքանչյուրն իր հողատարածքն է ունենալու. Միք. 4:4
4 Այլ ամեն մարդ պիտի իր որթի տակին բնակուէ, եւ իր թզնու տակին, եւ վախեցնող պիտի չ'լինի, որովհետեւ Զօրաց Տիրոջ բերանն է ասել:
- Պտղաբեր. Ամովս 9:13
Ահա օրեր պիտի գան, ասում է Տէրը, որ հերկողը կ'հասնէ հնձողին, եւ խաղող կոխողը՝ սերմ ցանողին. եւ սարերը քաղցու կ'կաթեցնեն, եւ բոլոր բլուրները կ'հալուին:

«Երկինքը» չէ.


- Հմմտ. Հավերժությանը, որ հետո է գալիս
- «Նոր երկիրը» չէ. Ես. 65:17, 66:22, Բ Պետ. 3:13, Հայտ. 21:1
Ես. 65:17 - 17 Որովհետեւ ահա եւ նոր երկինք եւ նոր երկիր եմ ստեղծում, եւ առաջինները պիտի չհիշվեն եւ միտք պիտի չգան:
2 Պետ. 3:13 - 13 Բայց նորա խոստմունքի պէս՝ նոր երկնքի եւ նոր երկրի ենք սպասում. Որոնցում արդարություն է բնակվում:
Հայ. 21:1 - 1 Եւ տեսա նոր երկինք եւ նոր երկիր. որովհետեւ առաջի երկինքը եւ երկիրն անցան. եւ էլ ծով չ'կա:
- Ոչ թէ «որտեղ արդարությունն է բնակվում, չարությունը սահմանափակված է, անմիջապէս պատժվում է. Ես. 11:1-16

Չազարամյակի ժամանակ երկարակեցությունը

- Մահը միայն անիծյալի համար է. Ես. 65:17
- Մեծ Նեղությունների սրբերով ավարտվում է «առաջին հարությունը». Հայտ. 20:4-6
- Չկան հրեա անհավատներ. Եր. 31:31-34
- Բոլորն ապրում են առնվազը 100 տարի. Ես. 65:20
- Այսպիսով, մահը միայն հազարամյակում ծնվածների համար է?

Հագարամյակի տաճարը. Եզեկիել 40-48

Հագարամյակի տաճարի նկարագրությունը շատ մանրամասն է (ոչ թե ընդամենը սիմվոլիկ), բոլոր ազգերը պետք է այնտեղ երկրպագեն, զոհերն ու զոհաբերությունները վերականգնվում են, այն բաց է միայն Շաբաթ օրը և Ամսագլխին:



Հագարամյակի ընթացքում, Տապանակն այլևս պաշտամունքի կենտրոնը չէ Երուսաղեմում: Այն կփոխարինվի Տիրոջ Գահով, քանի որ բոլոր ազգերը պետք է հավաքվեն դրա մոտ: (Տապանակը և Շնորհաց Աթոռը երկու տարբեր թեմաներ են Սուրբ Գրքում):

Տիրոջ Գահը

Մատ. 25:31 - 31 Եւ երբոր մարդի Որդին իր փառքով կգա եւ ամեն սուրբ հրեշտակները նորա հետ, այն ժամանակ կնստի իր փառաց աթոռի վրա.

Ես. 16:5 - 5 Եւ աթոռը ողորմությունով կհաստատուի, եւ նորա վրա կնստի ճշմարտությունով՝ Դավիթի խորանումը մի դատավոր, որ իրավունք է որոնում եւ արդարությունը շուտով գործադրում:

Չաք. 6:12-13 - 12 Եւ ասա նորան թէ Այսպէս է ասում Չօրաց Տէրը թէ Ահա մի մարդ՝ անունը Շառավիղ. Նա իր տեղից պիտի բուսնէ, եւ շինէ Տիրոջ տաճարը: 13 Եւ նա կշինէ Տիրոջ տաճարը, եւ նա մեծափառություն է կրելու, եւ պիտի բազմէ ու իշխէ իր աթոռի վրա, եւ նա քահանա է լինելու իր աթոռի վրա, եւ խաղաղության խորհուրդ պիտի լինի երկուսի մէջտեղը:

Եր. 3:16-17 - 16 Եւ երբոր դուք շատացած եւ աճած կ'լինիք այն երկրումս այն օրերը, ասում է Տէրը, այլ եւս չեն ասի՝ Տիրոջ ուխտի տապանակը, եւ նա միտք չի ընկնի, եւ նորան չեն հիշի ու չեն ուզի. եւ այլ եւս չեն շինի: 17 Այն ժամանակ Երուսաղեմը կ'կոչեն՝ Տիրոջ աթոռ, եւ նորա վրա պիտի ժողովեին բոլոր ազգերը Տիրոջ անունի համար Երուսաղեմում. եւ այլ եւս չեն գնա իրանց չար սրտի կամակորոթյան ետեւից:

7) Եւ երբոր հագար տարին կ'լրանա՝ կ'արձակուի սատանան իր բանտից. եւ դուրս կ'գնա որ մոլորեցնէ այն ազգերը, որ երկրի **չորս անկյունում են**, եւ Գոգը եւ Մագոգը, որ հավաքէ նորանց պատերազմի, որոնց թիվը ծովի ավազի չափ է: 8) Եւ վեր գնացին երկրի լայնութեան վրա, եւ սուրբերի բանակը եւ սիրելի քաղաքը շրջապատեցին:

Մա չպետք է շփոթել եզեկիել 38-39-ի հետ, որ հյուսիսից է գալիս, ոչ թե երկրի չորս կողմերից, և նախքան Երկրորդ Գալուստն է և այլն: Ժամանակը, վայրը և մասնակիցները լրիվ տարբեր են:

Գոզն ու Մագոզը նորի՞ց են հայտնվում: Մագոզը ժողովուրդ է. սակայն ինչպե՞ս կարող է Գոզը ողջ լինել 1000 տարի անց: Նա դև թագավոր է: «Մորեխների թագավոր» (հմմտ. Առ. 30:27, Հայտ. 9): (Մա նմանատիպ ճակատամարտի երկրորդ դեպքն է):

9) Եւ երկնքից կրակ իջավ Աստուածանից եւ լափեց նորանց. եւ Բանսարկուն որ նորանց մոլորեցնում էր զցուեցավ կրակի եւ ծծմբի լիճը, ուր որ էին գազանը եւ սուտ մարգարէն:

(Հավանակաբար, այս ժամանակահատվածում ամենամեծ բնակչությունը կլինի, քան երբևէ, կատարյալ պայմանների պատճառով, ոչ մի հիվանդություն կամ պակասություն չկա և այլն):

Նույնիսկ հազար տարվա կատարյալ կառավարումից հետո էլ բավականաչափ չարություն կար մարդկանց սրտերում, որ առիթի դեպքում նորից շարունակում է ապստամբել... ցանկացած մարդ ծնվում է սկզբնական մեղքի բնությամբ: Կատարյալ միջավայրն անգամ բացահայտում է մարդու անկյալ բնությունը: Կատարյալ միջավայրը չի կարող կատարյալ սիրտ ստեղծել: Մեր սրտի իրական բնույթը կարող է ճանաչվել միայն Աստծո Խոսքով (Եր. 17:9):

10) Եւ կ'չարչարուին գիշեր եւ ցերեկ հավիտեանս հավիտենից:

1000 տարի հետո էլ «ահավոր զույգը» նորից այնտեղ է, Աստվածաշնչում «ոչնչացում» չկա...

11) Եւ տեսա մի սպիտակ մեծ աթոռ, եւ նորա վրա նստողին. որի երեսից երկինքը եւ երկիրը փախան. եւ տեղ չ'գտնուեց նորանց համար:

Չպետք է շփոթել Բարձր (Վերացած) Գահի հետ: Դատաստանի ճերմակ Մեծ գահը (մահացածների). Հմմտ. Հայտ. 4, Դան 7:9-11, Ես. 6, Եզեկ. 1, Ա Թագ. 22:19, Ել. 24:9-11:

Դատավոր = Քրիստոս. Հովհ. 5:22,27,29, Մաթ. 19:28, Գործք. 10:42, 17:31: Հավատացյալների համար չէ. (Հովհ. 5:24 հմմտ. Մաթ. 7:22-23): Նշում. միջավայրի պաշտպանները դատապարտված են ձախողման. նրանք չեն կարող փրկել երկիրը. (Ես. 65:17, Մաթ. 24:35, Բ Պետ. 3:10-12, Եբր. 1:10-12):

12) Եւ տեսա մեռելները մեծ եւ փոքր կանգնած աթոռի առաջին. եւ գրքեր բացուեցին, եւ մի ուրիշ գիրք էլ բացուեց, որ է կեանքի գիրքը, եւ մեռելները դատուեցան այն գրքերում գրուածներից իրենց գործերի համեմատ:

Ի՞նչ գրքեր (հոգնակի): Աստծո Խոսքը. «Այն խոսքը, որ Ես խոսեցի, կդատի նրան վերջին օրը» (Հովհ. 12:48): «Գործերը» չեն փրկում, դրանք պարզապես հաստատում են

դատավճիռը: Կա Դատավոր, բայց չկան երդվյալ ատենակալներ, մեղադրանք, բայց ոչ պաշտպանություն, դատավճիռ, բայց ոչ բարեխոսություն:

Նկատեք, որ «մեռելներ» բառը հանդիպում է 7 անգամ 12-14 համարներում:

Նախքան Աստված կստեղծի Նոր երկինքն ու Նոր երկիրը, Նա պետք է լուծի մեղքի հարցերը. Նա սա կանի Մեծ Ճերմակ Գահի մոտ:

13) Եւ ծոփս իր մէջի մեռելները տուալ, եւ մահը եւ դժոխքը իրենց մէջի մեռելները տուին. եւ ամեն մէկն իրենց գործերի համեմատ դատուեցին:


Գործերի համեմատ դատվեցին. մահացու է: Նույնսիսկ մարդկային չափանիշներով նրանք մեղավոր են: (Փեմբերը և այլն. Դիվային ուժերը հուզեցին ծովը (Մաթ. 8:26), դևերը ժամանակավոր ապաստան գտան ծովում (Մաթ. 8:30):

14) Մահը եւ դժոխքը գցվեցին կրակի լճի մէջ. սա երկրորդ մահն է:

Մահերի մահը (տես հ.6): Հադեսը՝ շեղը (դժոխքը), ժամանակավոր է: Գեհենը «մայուն» է, այսինքն, մեր ժամանակային տիրույթից դուրս:

Մահվան պատկերը

Յոգի



Մարմին

15) Եւ եթէ մէկը գրուած չ'գտնվեց կեանքի գրքի մէջ, կրակի լճի մէջ գցուեցալ:

Ու՞մ գրքերը: Ո՞վ է պահում դրանք: «Կյանքի գիրքը. Ել. 32:32,33, Սաղմ. 69:28, Հայտ. 21:27, Փիլիպ. 4:3, Հայտ. 13:8, 17:8: **Քավատացյալների անունները, ոչ թե արարքները.** Ղուկ. 10:20, գործերը. Հռոմ. 2:11,12: (Հիշատակի գիրք. Մաղ. 3:16, «Նրա անվան վրա մտածողների») համար, հմմտ. Ա կորն. 3:14,15):

Դժոխքն Աստծո արդար բնավորության վկան է: Դժոխքը մարդկային պատասխանատվության վկան է: Աստված մարդկանց դժոխք չի ուղարկում: Նրանք իրենք են իրենց ուղարկում այնտեղ՝ մերժելով Փրկչին (Հովհ. 3:16-21, Մաթ. 25:41): Եթե մենք մեղքին

նայենք այնպես, ինչպես Աստված է նայում, մենք կհասկանայինք, թե ինչու գոյություն ունի այդպիսի մի վայր, որ կոչվում է դժոխք: Քո անունը գրված է Գառան Կյանքի գրքում: Կամ, միգուցե, դու պատրաստվում ես ինքդ քեզ պաշտպանել վերջին դատաստանի առաջ: **(Յարցը նրանում չէ, թե ինչ գիտես, այլ թե Ում գիտես):**

Առանցքային հարցեր (Key Questions)

- Ի՞նչ է լինում, երբ մարդը մահանում է
- Կա՞ իրականում հանդերձյալ կյանք
- Ինչպիսի՞ն է երկինքը:
- Կա՞ իրականում դժոխք
- Ինչպիսի՞ն է հավիտենությունը և այն «իրականությունը», որի մեջ մենք գտնվում ենք:

Կապված երկնքի հետ

Այսօր մեծամասնությունը շարունակում է հավատալ հանդերձյալ կյանքի գոյությանը, որ ամեն մարդ հոգի ունի և որ Երկինքն ու Դժոխքը, ամենայն հավանականության, գոյություն ունեն:

Բայց նայնպես, 50 միլիոնից ավելի ամերիկացիներ վստահ չեն իրենց անձնական ապագայի հարցում. Ամերիկացիների մոտ 2/3-ը հավատում է, որ երկինք է գնալու: Չորսից մեկը խոստովանել է, որ չգիտի, թե ինչ կլինի իր հետ, երբ մահանա: 1%-ից պակաս մարդիկ են մտածում, որ դժոխք կգնան, երբ մահանան: 20-ից մեկը հավատում է, որ նորից ետ կգա որպես կյանքի այլ ձև:

Չակասական մտքեր

- **Վերստին ծնված քրիստոնյաների մեջ.** 10%-ը հավատում է, որ մարդիկ վերամարմնավորվում են մահից հետո: 29%-ը պնդում է, որ հնարավոր է շփվել մահացածների հետ: 50%-ը վստահ է, որ մարդ կարող է փրկություն վաստակել իր բարի գործերի հիման վրա: Իսկ շատերը հավատում են, որ դեպի երկինք մուտք ձեռք բերելու բազմաթիվ տարբերակներ կան: Տրամաբանական հակասությունները շատ են, նույնիսկ վերստին ծնված քրիստոնյաների մեջ: Շատերը վերաձևակերպում են շնորհը, նկատի ունենալով, որ Աստված այնքան է փափագում մարդկանց փրկել դժոխքից, որ կփոխի Իր բնույթն ու համատիեզերական սկզբունքները նրանց անհատական օգուտի համար:
- **Աթեիստներն ու ազնոստիկները նույնպես խառնաշփոթ վիճակում են.** 50%-ը հավատում է, ամեն մարդ հոգի ունի, որ դժոխք ու դրախտ գոյություն ունեն, և որ հանդերձյալ կյանք գոյություն ունի: 12%-ը հավատում է, որ Հիսուս Քրիստոսին ընդունել, հավանաբար, հնարավոր է դարձնում կյանքը մահից հետո: Աթեիստներն ու ազնոստիկները նույնպես իրենց մտածելակերպի մեջ հակասությունն ունեն:

Ղազարոսն ու հարուստը (Ղուկաս 16:19-31)

19 Եւ մի հարուստ մարդ կար, եւ շատ ազնիվ ծիրանի եւ բեհեզ էր հագնում. եւ ամեն օր փառավոր զուարճություն էր անում: 20 Մի աղքատ մարդ էլ կար, անունը Ղազարոս. որ նորա դռան մօտ գցուած էր խոցերով լիքը. 21 Եւ ցանկանում էր իրեն կշտացնել այն փշրանքներից, որ հարուստի սեղանից ընկնում էին. այլ եւ շներն էլ գալիս էին եւ նորա խոցերը լիզում էին: 22 Եւ եղավ որ աղքատը մեռավ, եւ հրեշտակները նորան տարան **Աբրահամի գոգը**. հարուստն էլ մեռավ եւ թաղուեցավ:

Միայն մեկը կա, որ վերադարձել է գերեզմանից. Նա միայն իրավունք ունի այս մասին խոսելու: Այս պատմությունը մեկն է այն մի քանի վստահելի հատվածներից, որ վերաբերվում են այս թեմային: Հաշվի առեք, որ սա առակ չէ. սրանք իրական պատմական անձնավորություններ են, իրական անուններով:

23 Եւ **դժոխքում**՝ մինչ տանջանքի մեջ էր գտնվում, իր աչքերը բարձրացրեց, հեռվից Աբրահամին տեսավ, եւ Ղազարոսին էլ նորա գոգում: 24 Եւ նա աղաղակեց եւ ասեց. Հայր Աբրահամ, ինձ ողորմիր, եւ Ղազարոսին ուղարկիր, որ իր մատի ծայրը թրջէ ջրով, եւ իմ լեզուն հովացնէ. որովհետեւ այս կրակի բոցի մեջ տանջվում եմ: 25 Աբրահամն էլ ասեց. Որդեակ, հիշիր, որ դու ընդունեցիր քո բարիքը քո կեանքում, եւ նմանապես էլ Ղազարոսը՝ չարչարանքները. եւ հիմա սա այստեղ մխիթարվում է, իսկ դու տանջվում ես:

Այնտեղ «հոգու քուն» չկա: Բոլորը գիտակցում են և հասկանում:


26 Եւ այս բոլորից բացի, մեր եւ ձեր մեջ մեծ անդունդ է հաստատված, որ այստեղից ձեզ մօտ անցնել ուզողները չ'կարողանան, եւ ոչ էլ այդտեղից մեզ մօտ անցնեն: 27 Եւ ասեց. Ուրեմն աղաչում եմ քեզ, հայր, որ դորան ուղարկես իմ հօր տունը. 28 Որովհետեւ ես հինգ եղբայր ունեմ. որ նորանց վկայություն տա, որ նորանք էլ չգան այս տանջանքի տեղը:

Նա շատ անհանգիստ է իր ընտանիքի համար. նա նաև հասկանում էր, թե ինչ պետք է նրանք անեին, որ խոսափեին իր դաժան ճակատագրից...

29 Աբրահամն ասեց նորան, Նորանք Մովսէսին եւ մարգարէներին ունին, թող նորանց լսեն: 30 Նա էլ ասեց. Ոչ, հայր Աբրահամ, այլ եթէ մեռելներից մեկը նորանց մօտ գնա, կ'ապաշխարեն: 31 Եւ նորան ասեց. Եթէ Մովսէսին եւ մարգարէներին ականջ չեն դնում, չեն էլ համոզուիլ՝ եթէ մեռելներից մեկը յարութիւն առնէ:

(Հետաքրքիր է, որ Ղազարոս անունով մեկը հարություն առավ...):

Ստորերկրյա աշխարհ (The Underworld)



Մա Հին Կտակարանյան պատկեր է: Խաչից հետո, Հիսուսը եկավ, հայտարարեց Իր հաղթության մասին և «Աբրահամի գոգում» եղողներին տարավ Իր հետ (Մաթ. 27):

Որոշ մտքեր

- Հադեսում հարուստը կատարելապես գիտակցում էր. հիշում էր, խոսում, ցավ ապրում, ցանկանում
- Նրա հավիտենական ճակատագիրը ցավալիորեն վճռված էր
- Նա գիտեր, որ ինքն արդար և ճիշտ հատուցում էր ստանում: Նա նաև գիտեր, թե ինչ պետք է անեին իր եղբայրները, որպեսզի խուսափեին իր սեփական ճակատագրից. ապաշխարեին:
- (Նա դեռ դժոխքում չէր, այլ Հադեսում):

Սանդարամետ (The Underworld)

Որովհետև Քրիստոսն էլ մեկ անգամ մեղքերի համար չարչարուեցավ, այն Արդարն անարդարների վրա, որ մեզ մօտեցնե Աստուծուն. որ թեև մեռավ մարմնով, բայց կենդանի եղավ հոգով: 19 Որով գնաց բանտում եղող հոգիներին էլ քարոզեց: 20 Որոնք մի ժամանակ ապստամբ էին, երբոր Աստուծո երկայնատությունը համբերում էր նորանց Նոյի օրերում տապանը պատրաստելիս, որի մեջ քիչ այսինքն ութ հոգի ջրից պրծան. (Ա Պետ. 3:18-20):

Տէր Եհովայի հոգին ինձ վերայ է, ըստ որում Տէրը օծել է ինձ. նա ուղարկել է ինձ աղքատներին աւետիք տալու, կոտրած սիրտ ունեցողներին բժշկելու, գերիներին ազատութիւն հրատարակելու եւ կապեալներին՝ արձակում. Տիրոջ համար հրատարակելու ընդունելի տարին, եւ վրէժխնդրութեան օրը՝ մեր Աստուծոյ համար. բոլոր սգաւորներին մխիթարելու համար. (Ես. 61:1,2):

Հիսուսն այս հատվածը մեջբերում արեց Նազարեթում ներկայանալիս (Ղուկ. 4:17-21):

Եւ գերեզմանները բացուեցան. եւ շատ սուրբ ննջեցեալների մարմիններ յարութիւն առան. Եւ գերեզմաններից դուրս գալով, նորա յարութիւնից յետոյ, սուրբ քաղաքը մտան, եւ շատերին երեւեցան: (Մաթ. 27:52,53):

Ոչնչացում (Annihilationism?)

Եւ երկրի հողում գնացողների շատեր պիտի զարթնեն ոմանք ի հավիտենական կեանք, իսկ ոմանք ի յահիտենական նախատինք եւ անարգանք: (Դան. 12:2):

10) Եւ կ'չարչարուին գիշեր եւ ցերեկ հավիտյանս հավիտենից:

1000 տարի հետո էլ զազանն ու սուտ մարգարեն շարունակում են տանջվել, ոչ թե ոչնչանում են:

Վերջին դաս

Կարդացեք 21 և 22 գլուխները: Վերանայեք ձեր նշումները ողջ գրքի համար: